

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՆՈՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՎ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 1-Լ

«24» դեկտեմբերի 2022թ.

ք. Երևան

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով) «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» օրակարգային հարցով նախքան քվեատուփը բացելը,

արձանագրում է՝

- | | |
|--|---|
| 1. ժողովին մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվը (ցուցակային թիվ). | 2541 (երկու հազար հինգ հարյուր քառասունմեկ) |
| 2. ըստ ցուցակի ստորագրությունների քվեաթերթիկ ստացողների թիվը | 984 (ինը հարյուր ութսունչորս) |
| 3. չօգտագործված քվեաթերթիկների թիվը | 1649 (հազար վեց հարյուր քառասունինը) |

Հաշվիչ հանձնաժողովի 2022թ. դեկտեմբերի 15-ի թիվ 3 որոշման համաձայն տպագրվել և շրջանառության մեջ էր դրվել 2633 (երկու հազար վեց հարյուր երեսուներեք) հատ քվեաթերթիկ:

Չօգտագործված քվեաթերթիկների թվում է հաշվառվել նաև 2 (երկու) փոխարինված քվեաթերթիկ:

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 23.12.2022թ-ին տրամադրված լրացուցիչ ցուցակի համաձայն ընտրողների ցուցակը ավելացել է 5 (հինգ) նոր փաստաբաններով և պակասել է /կասեցված փաստաբաններ/ 23-ով (քսաներեքով): 24.12.2022թ-ին ՀՀ ՓՊ ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքների հիման վրա ընտրողների ցուցակը ավելացել է 3 (երեք) նոր փաստաբաններով /վրիպակի արդյունքում ցուցակից դուրս մնացածներ/, որի արդյունքում ժողովին մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվը կազմել է 2541 (երկու հազար հինգ հարյուր քառասունմեկ):

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

Գևորգ Գևորգյան

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝

Աշոտ Խլոյան

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

Հեղինե Մանուկյան

Մաթենիկ Զաքարյան

Աստղիկ Գևորգյան

Նազիկ Մալխասյան

Կարինե Ղաշանցյան

Էրիկ Պետրոսյան